

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Կոնցեռն-Էներգոմաշ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան ղեկավարում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն ղեկավարի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Օանոթ.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	396,486	306,387
Ոչ նյութական ակտիվներ	5	4,420	5,213
Հետաձգված հարկային ակտիվներ	6	9,815	13,045
		<u>410,721</u>	<u>324,645</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	1,332,459	1,376,770
Սոնտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	1,671,324	1,363,172
Տրամադրված փոխառություններ	9	27,000	170,000
Բանկային ավանդներ	10	213,623	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	1,871,498	2,052,573
		<u>5,115,904</u>	<u>4,962,515</u>
Ընդամենը ակտիվներ		<u>5,526,625</u>	<u>5,287,160</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Բաժնետիրական կապիտալ	12	250,100	100,100
Պահուստային կապիտալ		37,515	15
Կուտակված շահույթ		2,489,168	3,934,430
		<u>2,776,783</u>	<u>4,034,545</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Սոնտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	1,254,892	1,015,552
Կարճաժամկետ փոխառություններ	14	1,281,500	-
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		213,450	237,063
		<u>2,749,842</u>	<u>1,252,615</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>5,526,625</u>	<u>5,287,160</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 3-ին:



Գալինե Թադևոսյան

Տնօրեն

[Handwritten signature]

Մանուկ Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ/Ֆինանսական վերահսկիչ

[Handwritten signature]

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ սկզբնաղբյուրի 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հասույթ	15	7,410,774	7,742,014
Վաճառքի ինքնարժեք	16	(4,094,487)	(4,464,706)
Համախառն շահույթ		3,316,287	3,277,308
Այլ եկամուտ		63,409	44,931
Իրացման ծախսեր	17	(781,345)	(455,337)
Վարչական ծախսեր	18	(476,802)	(427,390)
Այլ ծախսեր	19	(173,005)	(129,960)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,948,544	2,309,552
Ֆինանսական եկամուտ		11,630	-
Այլ ֆինանսական արդյունքներ	20	(2,035)	(213,467)
Շահույթ մինչև հարկերը		1,958,139	2,096,085
Շահութահարկի գծով ծախս	21	(365,901)	(433,662)
Տարվա շահույթ		1,592,238	1,662,423
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,592,238	1,662,423

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնետիրա- կան կապիտալ	Պահուս- տային կապիտալ	Կուտակ- ված շահույթ	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	50,100	15	3,272,007	3,322,122
Տարվա շահույթ	-	-	1,662,423	1,662,423
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,662,423	1,662,423
Շահաբաժիններ	-	-	(1,000,000)	(1,000,000)
Կապիտալի համալրում	50,000	-	-	50,000
Գործարքներ սեփականատերերի հետ	50,000	-	(1,000,000)	(950,000)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,100	15	3,934,430	4,034,545
Տարվա շահույթ	-	-	1,592,238	1,592,238
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,592,238	1,592,238
Շահաբաժիններ	-	-	(3,000,000)	(3,000,000)
Պահուստային կապիտալի համալրում	-	37,500	(37,500)	-
Կապիտալի համալրում	150,000	-	-	150,000
Գործարքներ սեփականատերերի հետ	150,000	-	(3,000,000)	(2,850,000)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	250,100	37,515	2,526,668	2,776,783

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ <i>ճշգրտումներ</i>	1,592,238 -	1,459,190
Մաշվածություն և ամորտիզացիա	75,343	63,872
Ֆինանսական եկամուտ	(11,630)	-
Շահութահարկի գծով ծախս	365,901	433,662
Հիմնական միջոցների օտարումից վնաս/(օգուտ)	-	6,051
Այլ ֆինանսական արդյունքներ	2,035	213,467
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>2,023,887</u>	<u>2,176,242</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		
Պաշարների փոփոխություն	(307,089)	253,257
Այլ ակտիվների փոփոխություն	66,473	(161,703)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	224,442	30,377
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>2,007,713</u>	<u>2,298,173</u>
Վճարված շահութահարկ	(386,284)	(318,151)
<i>Գործառնական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ</i>	<u>1,621,429</u>	<u>1,980,022</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(187,434)	(50,189)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	623	-
Մարված/(տրված) փոխառություններ	143,000	(170,000)
Ստացված տոկոսային եկամուտ	11,195	-
Բանկային ավանդներ	(213,623)	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(246,239)</u>	<u>(220,189)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառություններ	1,281,500	-
Կապիտալի համալրում	150,000	50,000
Վճարված շահաբաժիններ	(3,000,000)	(1,000,000)
<i>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(1,568,500)</u>	<u>(950,000)</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(193,310)	809,833
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	12,235	(226,585)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	<u>2,052,573</u>	<u>1,469,325</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	<u><u>1,871,498</u></u>	<u><u>2,052,573</u></u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Կոնցեն-Էներգումաշ» ՓԲԸ (Ընկերություն) գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 23 սեպտեմբեր 1996թ.-ին ՀՀ օրենսդրության համաձայն:

Սկսած 2015թ.-ից Ընկերությունը սկսել է զբաղվել բժշկական և լաբորատոր սարքավորումների ներմուծմամբ և վաճառքով, տարիների ընթացքում Ընկերությունն ապացուցել է, որ հանդիսանում է բժշկական և լաբորատոր սարքավորումների վստահելի և առաջադեմ մատակարար: Ընկերության աշխատակիցները՝ լինելով աշխարհահռչակ առաջատար առողջապահական կազմակերպությունների մասնագետների և փորձագետների հետ սերտ համագործակցության մեջ, անընդհատ աշխատում են կիրառել առավել կատարելագործված մոտեցումներ երկրում արդի տեխնոլոգիաների ներդրման և առաջխաղացման համար, ինչի արդյունքում վայելում են հաճախորդների բարձր վստահությունը:

Ընկերության հիմնական գործառնություններից է հանդիսանում նոր, արդի տեխնոլոգիաների ներդրումը բժշկական ծառայությունների ոլորտում, ինչը հնարավոր չէ առանց արդի տեխնոլոգիաների վրա հիմնված սարքավորումների, մասնագիտական ծառայության և մտավոր աջակցության: Ընկերությունն աշխատում է բժշկական սարքավորումների ոլորտում այնպիսի առաջատար կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Roche Diagnostics, Sysmex, bioMerieux, Canon Medical Systems և այլ առաջատար ընկերություններ:

2014թ. ընթացքում Ընկերությունը սկսել է զբաղվել նաև անալիտիկ չափիչ սարքերի ներկրմամբ և վաճառքով ինչպես մասնավոր այնպես էլ պետական ընկերություններին: Այս ոլորտում ընկերությունը ներկայացնում է Agilent Technologies ընկերությանը: Ընկերությունը սկստիվ գործունեություն է ծավալում նաև ուսումնական և կոսմետոլոգիական սարքավորումների բնագավառում:

Ընկերության գրանցման հասցեն է Երևան, Արգունայան 32, բն. 10, իսկ հիմնական գործունեության հասցեն է Ազատության պողոտա 26/8.:

Ընկերության աշխատակիցների թիվը 31 դեկտեմբեր 2023թ.-ի դրությամբ կազմել է 87 (2022թ.՝ 78):

Գործարար միջավայր

Ընկերությունն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառայած մարտահրավերներին: Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է իր հավատարմությունը լավ կառավարման սկզբունքներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, թափանցիկության և հաշվետվողականության:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում սրվել է 2020թ. Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի նշանակալի առևտրային գործընկեր է, ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, ինչպես նաև այդ պատժամիջոցների ուժգնացումը էական ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսական շուկայի վրա:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Այդ հանգամանքը նպաստել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքի աճին, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ: Ընկերության ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակը: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Ընկերության գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, դեկլարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները առաջին անգամ են կիրառվել 2023թ.:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	
<i>ՖՀՄՄ 17</i>	<i>Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՄ 17, ներառյալ ՖՀՄՄ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՄ 4 փոփոխություններ)</i>	<i>1 հունվարի 2023թ.</i>
<i>ՀՀՄՄ 12</i>	<i>Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՄ 12 փոփոխություններ)</i>	<i>1 հունվարի 2023թ.</i>
<i>ՖՀՄՄ 17</i>	<i>ՖՀՄՄ 17-ի և ՖՀՄՄ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՄ 17 փոփոխություն)</i>	<i>1 հունվարի 2023թ.</i>
<i>ՀՀՄՄ 8</i>	<i>Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում(ՀՀՄՄ 8 փոփոխություններ)</i>	<i>1 հունվարի 2023թ.</i>

ՀՀՄՍ 1	Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 12	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)	1 հունվարի 2023թ.

Բացառությամբ սույն ծանոթագրության մեջ բացահայտված Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 ստանդարտների ստորև ներկայացված փոփոխությունների, այլ ստանդարտներն ու փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԻ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
----------	-------------------------------------	---

ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՖՀՄՍ 16	Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՍ 1	Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)	1 հունվարի 2024թ.
ՀՀՄՍ 21	Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)	1 հունվարի 2025թ.

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.5-ում, Ընկերությունը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը՝ համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների: Բացահայտումները հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ ավելի պարզեցվել են և հստակեցվել՝ բացառելով ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում է ՖՀՄՍ-ների պահանջները:

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ):

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	- 20 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 8 տարի
Տնտեսական գույք	- 8 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 8 տարի
Համակարգչային տեխնիկա	- 1 տարի
Այլ	- 8 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.4 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում պահեստի և հարակից տարածքների, գրասենյակային տարածքի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համար: Գրասենյակային տարածքների և պահեստների գծով վարձակալական պայմանագրերը սովորաբար կնքվում անորոշ ժամկետով:

Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը որպես վարձատու

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ՖՀՄՍ 16-ի համաձայն, համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:

Որպես վարձատու Ընկերությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,

- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային

ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նումինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նումինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես

Ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Պահուստային կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության կանոնադրական կապիտալի 15 տոկոսը, որը ձևավորվել է կանոնադրության համաձայն:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահաստուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Մյսայիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե

Ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարզևավճարներ

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենք, շինություն- ներ	Մեքենաներ և սարքավոր- ումներ	Տրանսպոր- տային միջոցներ, տնտեսական գույք և այլն	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	72,000	422,778	128,595	623,373
Ավելացում	-	39,837	8,851	48,688
Օտարում	-	(8,045)	-	(8,045)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,000	454,570	137,446	664,016
Ավելացում	-	182,796	4,638	187,434
Օտարում	-	(31,105)	(2,662)	(33,767)
Վերագնահատում որպես պաշար	-	(22,162)	-	(22,162)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,000	584,099	139,422	795,521
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	6,040	186,709	104,388	297,137
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	3,600	50,211	8,675	62,486
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(1,994)	-	(1,994)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,640	234,926	113,063	357,629
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	3,600	60,861	10,089	74,550
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(30,554)	(2,590)	(33,144)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,240	265,233	120,562	399,035
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	62,360	219,644	24,383	306,387
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,760	318,866	18,860	396,486

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությանը պատկանող շենքը գրավադրվել է որպես ապահովման միջոց թողարկվող երաշխիքների համար: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերոնշյալ շենքը շարունակում է մնալ որպես գրավադրված հիմնական միջոց:

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համա- կարգչային ծրագրեր	Կայք	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	4,871	2,756	7,627
Ավելացում	500	1,001	1,501
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,371	3,757	9,128
Ավելացում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,371	3,757	9,128
<i>Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,259	270	2,529
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	469	917	1,386
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,728	1,187	3,915
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	487	306	793
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,215	1,493	4,708
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,643	2,570	5,213
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,156	2,264	4,420

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը չունի գրավադրված ոչ նյութական ակտիվներ:

6 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	13,045	54,598
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս	(3,230)	(41,553)
Տարեվերջի մնացորդ	9,815	13,045

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	16,160	(3,135)	13,025
	16,160	(3,135)	13,025

<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	3,115	95	3,210
	<u>3,115</u>	<u>95</u>	<u>3,210</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	13,045	(3,230)	9,815
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.			
Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	54,598	(38,438)	16,160
	<u>54,598</u>	<u>(38,438)</u>	<u>16,160</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	-	3,115	3,115
	<u>-</u>	<u>3,115</u>	<u>3,115</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	54,598	(41,553)	13,045
Ներառյալ՝			
		2023թ.	2022թ.
Փոխհատուցման/մարման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում		9,815	13,045
Փոխհատուցման/մարման ենթակա 12 ամսվա ընթացքում		-	-
		<u>9,815</u>	<u>13,045</u>

7 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ	1,325,005	1,369,415
Վառելիք	401	190
Պահեստամասեր	1,370	1,695
Այլ պաշարներ	5,683	5,470
	<u>1,332,459</u>	<u>1,376,770</u>

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 4,159,350 հազար դրամ (2022թ.՝ 4,539,529 հազար դրամ): Ընկերության պաշարները գրավադրված են որպես ապահովում թողարկվելիք բանկային երաշխիքների գծով:

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,309,938	1,265,897
Պարտքային կորուստների համար պահուստ	(47,437)	(22,884)
Զուտ դեբիտորական պարտքեր	1,262,501	1,243,013
Տրված կանխավճարներ	399,905	116,118
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	23	-
Տոկոսների գծով դեբիտորական պարտք	435	-
Այլ դեբիտորական պարտքեր	8,460	4,041
	1,671,324	1,363,172

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գույքը հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի միջին տևողությունը կազմում է 63 օր (2022թ. 56 օր):

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

9 Տրամադրված փոխառություններ

Տրամադրված փոխառությունները իրենցից ներկայացնում են անտոկոս կարճաժամկետ փոխառությունները, ստորև ընկերություններին:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Դիավանտ» ՍՊԸ	-	170,000
«Արտաշատ» ՍՊԸ	5,000	-
«Մատեր Ֆարմ» ՍՊԸ	22,000	-
	27,000	170,000

10 Բանկային ավանդներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը Ամերիա Բանկ-ում ներդրել է կարճաժամկետ ավանդներ ՀՀ դրամով: Ավանդները ներ են դրվել տարեկան 4.75-7.0 տոկոսադրույքով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդների գծով հաշվեգրված չվճարված տոկոսը կազմում է 435,368 ՀՀ դրամ:

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	916	948
Բանկային հաշիվներ	1,870,582	2,051,625
	<u>1,871,498</u>	<u>2,052,573</u>

12 Կապիտալ և պահուստներ

12.1 Կանոնադրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2023թ.	Սովորական բաժնետոմսեր 2022թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
20 սովորական բաժնետոմս	250,100	100,100

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի: 2023թ. ընթացքում ընկերության բաժնետերերը իրենց բաժնեմասերին համամասնորեն ավելացրել են բաժնետիրական կապիտալը 150,000 հազար դրամով (2022թ.-ին 50,000 հազար դրամ):

12.2 Շահաբաժիններ

2023թ. ընթացքում Ընկերությունը հայտարարել է 3,000,000 հազար դրամի չափով շահաբաժին (2022թ.-ին 1,000,000 հազար դրամ), ինչը ամբողջությամբ վճարվել է հենց 2023թ.-ի ընթացքում (2022թ.-ին վճարվել է 1,000,000 հազար դրամ):

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	507,862	288,703
Հաճախորդներից կանխավճարներ	466,375	485,944
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	208,295	151,130
Հատուցումներ աշխատակիցներին	-	-
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պարտավորություն	72,360	89,775
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-
	<u>1,254,892</u>	<u>1,015,552</u>

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 36 օր (2022թ.՝ 33 օր):

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

14 Կարճաժամկետ փոխառություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կարճաժամկետ փոխառությունները իրենցից ներկայացնում են ընկերության կապակցված կողմերից ստացված անտոկոս կարճաժամկետ փոխառությունները, որոնք ենթակա են մարման մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Դիավանտ» ՍՊԸ	304,000	-
Դավիթ Առաքելյան	265,000	-
Բելլա Թադևոսյան	712,500	-
	<u>1,281,500</u>	<u>-</u>

15 Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	7,221,030	7,591,449
Ապրանքների մեծածախ վաճառքից հասույթ	46,021	40,609
Ծառայությունների մատուցումից հասույթ	143,723	109,956
	<u>7,410,774</u>	<u>7,742,014</u>

16 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մեծածախ վաճառված ապրանքների ինքնարժեք	4,009,370	4,400,611
Մանրածախ վաճառված ապրանքների ինքնարժեք	25,482	23,664
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	59,635	40,431
	<u>4,094,487</u>	<u>4,464,706</u>

17 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների փոխհատուցման ծախսեր	693,237	375,887
Մաշվածություն, ամորտիզացիա և սպասարկման ծախսեր	50,090	30,938
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	36,225	36,204
Իրացման այլ ծախսեր	1,793	12,308
	<u>781,345</u>	<u>455,337</u>

18 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցների փոխհատուցման ծախսեր	261,319	239,767
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	55,195	48,326
Գործուղման ծախսեր	29,626	27,200
Ներկայացուցչական ծախսեր	4,118	4,794
Բանկային ծախսեր	63,092	45,555
Մաշվածություն, ամորտիզացիա և սպասարկման ծախսեր	28,613	32,633
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	19,110	18,673
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	6,569	6,294
Վարչական այլ ծախսեր	9,160	4,148
	<u>476,802</u>	<u>427,390</u>

19 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անհատույց տրված ակտիվներ	14,039	5,085
Պաշարների դուրս գրում	75,067	19,079
Տույժեր և տուգանքներ	3,823	15,781
Դեբիտորական պարտքերի արժեզրկում, դուրս գրում	27,162	16,199
Երաշխիքային ծախսեր	11,350	7,045
Պաշարների արժեզրկում	32,712	66,467
Այլ ծախսեր	8,852	304

173,005	129,960
---------	---------

20 Այլ ֆինանսական արդյունքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս</i>		
Դեբիտորական պարտքեր	628	(57,705)
Բանկային հաշիվներ	12,235	(226,585)
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(14,898)	70,823
	<u>(2,035)</u>	<u>(213,467)</u>

21 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	362,671	392,109
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 6)	3,230	41,553
	<u>365,901</u>	<u>433,662</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ- ների)	1,958,139		1,892,852	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	352,465	16.8%	340,713	18.0%
(Զհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	13,436	0.6%	92,949	4.9%
Շահութահարկի գծով ծախս	<u>365,901</u>	<u>17.5%</u>	<u>433,662</u>	<u>22.9%</u>

22 Ֆինանսական գործիքներ

22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Փոխառություններ և դեբիտորական պարտքեր</i>		
Բանկային ավանդներ	213,623	-
Տրամադրված փոխառություններ	27,000	170,000
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,318,833	1,269,938
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,871,498	2,052,573
	<u>3,430,954</u>	<u>3,492,511</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Անորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Կարճաժամետ փոխառություններ	1,281,500	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	580,222	378,478
	<u>1,861,722</u>	<u>378,478</u>

23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արտարժույթային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացուցված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ռուբլի	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,593	148,984	102,411	279,988
	<u>28,593</u>	<u>148,984</u>	<u>102,411</u>	<u>279,988</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտեր	294	476,146	9,182	485,622
	<u>294</u>	<u>476,146</u>	<u>9,182</u>	<u>485,622</u>
Զուտ արդյունք	<u>28,299</u>	<u>(327,162)</u>	<u>93,229</u>	<u>(205,634)</u>

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ռուբլի	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	157	16,906	498	17,561
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,976	776,785	326,105	1,117,866
	<u>15,133</u>	<u>793,691</u>	<u>326,603</u>	<u>1,135,427</u>

*Ֆինանսական
պարտավորություններ*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտեր	4,120	140,724	126,326	271,170
	4,120	140,724	126,326	271,170
Զուտ արդյունք	11,013	652,967	200,277	864,257

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) դեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) [փոխել՝ ըստ անհրաժեշտության] կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Շահույթ կամ վնաս	(32,716)	65,296	9,323	20,027
	(32,716)	65,296	9,323	20,027

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլում:

բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 3 ամիս	716,157	716,157
3-ից 6 ամիս	72,360	72,360
6-ից 12 ամիս	1,281,500	1,281,500
	2,070,017	2,070,017
2022թ.	Անտոկոս	Ընդամենը

Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)

Մինչև 3 ամիս

288,703

288,703

3-ից 6 ամիս

89,775

89,775

378,478

378,478

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

23.1 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները:

23.2 Ֆինանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

24 Պայմանականություններ

24.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25 Գործարքներ կապակցված կողմերի մեջ

Ընկերության կապակցված կողմերը ներառում են ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

25.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Դավիթ Առաքելյանի կողմից, ում պատկանում է Ընկերության բաժնետիրական կապիտալի 55%-ը, 25%-ը պատկանում է Բաբկեն Թադևոսյանին, իսկ մնացած 20%-ը Բելլա Թադևոսյանին:

25.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Տրամադրված փոխառություններ	418,385	582,000
Տրամադրված փոխառությունների մարում	528,760	412,000
Ստացված փոխառություններ	816,625	-
Մարված փոխառություններ	453,000	-
Ապրանքների վաճառք	289,312	136,596
Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում	-	-
<i>Բաժնետերեր</i>		
Տրամադրված փոխառություններ	120,000	120,000
Փոխառությունների մարում	120,000	120,000
Ստացված փոխառություններ	712,500	-
Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում	362	698
Ապրանքների և ծառայությունների վաճառք	-	-
Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	174,558	182,431
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,140	-
Տրամադրված փոխառություններ	5,000	170,000

Ստացված փոխառություններ	304,000	-
-------------------------	---------	---

Բաժնետերեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	274	-
--------------------------------------	-----	---

Ստացված փոխառություններ	977,500	-
-------------------------	---------	---

25.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ
 Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	336,281	55,734
Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի	2022թ. դեկտեմբերի 31-ի
Մնացորդներ	դրությամբ	դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ	24,212	10,121